«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-09/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2014թ. N 73-1/673427-14 գրությամբ ներկայացված «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.10.2014թ. N 73-1/673427-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ առաջարկելով ուսումնասիրել «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում կազմակերպել բողոքարկման գործընթաց:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 06.10.2014թ. N 73-1/673427-14 գրությամբ Կենտրոն է ուղարկել ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 02.10.2014թ. ՏԾԻԳ-649 գրության պատճենը:

2. «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 08.10.2014թ. N 09/032-1602 գրությամբ դիմել է «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին:

«Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն 24.10.2014թ. N 01/111 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ն 14.08.2014թ. ՏԾԻԳ-517 գրությամբ միակողմանի լուծել է «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի հետ 27.02.2014թ. կնքված «ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/1 ՃՀ» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր)՝ հիմք ընդունելով Պայմանագրի 1.3 կետը և 3.1.4 կետի «բ» ենթակետը, ինչի մասին նույն օրն Ընկերությանը պատշաճ ծանուցել է:

«Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն հայտնել է, որ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության համար պայմանագրի առարկա հանդիսացող «Հ-37, Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար-Այգեպար ճանապարհի Վազաշեն-Պառավաքար հատվածի շրջանցիկ ճանապարհի կառուցման» (այսուհետ նաև՝ Շրջանցիկ ճանապարհ, Աշխատանք) հրատապ բնույթն ու հույժ կարևորությունը, Ընկերությունը Շրջանցիկ ճանապարհի կառուցապատման աշխատանքը սկսել էր դեռևս 2013թ. նոյեմբերի 18-ին՝ Պայմանագրի կնքումից ավելի քան երեք ամիս առաջ:

Կառուցապատման աշխատանքների իրականացմանը զուգահեռ «Ճաննախագիծ» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են ուսումնասիրման և նախագծման աշխատանքներ, որոնց արդյունքում կազմված նախագծային-նախահաշվային փաստաթղթերն Ընկերությանն են հանձնվել 2014թ. մարտի 5-ին: Դրանց ուսումնասիրության

արդյունքում պարզ է դարձել, որ վերը նշված փաստաթղթերում տեղ են գտել բազմաթիվ թերություններ, մասնավորապես չեն հաշվարկվել կամ թերի են հաշվարկվել բնահողերի, ժայռային բնահողերի փխրեցման, հողի և ավազակոպճի տեղափոխման աշխատանքները, իսկ որ ամենահիմնականն է՝ ընդհանրապես չեն կատարվել երկրաբանական հետազոտություններ: Այդ մասին Ընկերությունն անմիջապես՝ 18.03.2014թ., գրավոր տեղեկացրել է Պատվիրատուին: Վերջինս էլ Ընկերության կողմից բարձրացված հիմնահարցին ընթացք տալու նպատակով 19.03.2014թ. ՏԾԻԳ-118 գրությամբ դիմել է «Ճաննախագիծ» ՍՊԸ-ին, որն ի պատասխան 24.03.2014թ. գրությամբ տեղեկացրել է Պատվիրատուին Ընկերության կողմից բարձրացված հարցի իրավացիության մասին: Սակայն, նախագծային-նախահաշվային փաստաթղթերում առկա բացթողումները համարվել են «երկրորդական» բնույթի, իսկ երկրաբանական հետազոտությունների կատարված չլինելու հանգամանքը կրկին նախագծող կազմակերպության ուսումնասիրության առարկան չի դարձել և հիմնախնդիրը մնացել է չլուծված:

Նախագծային-նախահաշվային աշխատանքներում առկա բացթողումներն ու թերությունները խոչընդոտել են աշխատանքի կատարմանը, ինչի վերաբերյալ մշտապես տեղյակ է պահվել Պատվիրատուին:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեխանիկայի ինստիտուտը Շրջանցիկ ճանապարհի գրունտային մասը կազմող ապարների նմուշների ամրության վերաբերյալ տվել է փորձագիտական եզրակացություն այն մասին, որ տվյալ նմուշները, համաձայն շինարարական նորմերի և կանոնների, դասվում են միջին, ամուր և շատ ամուր խմբերին: Այդ մասին կազմելով համապատասխան տեղեկանք, Ընկերությունն անմիջապես հայտնել է պատվիրատուին, սակայն նրանից ստացել միայն գրություններ, որ կատարվելիք աշխատանքները դանդաղել են:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ներկայումս շրջանցիկ ճանապարհի կառուցապատման աշխատանքները կատարվում են մեկ այլ կազմակերպության կողմից, և չնայած որ Պայմանագրի միակողմանի լուծման համար ողջ մեղքն ու պատասխանատվությունը վերագրվում է «Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ին, սակայն Ընկերության մեղքը պայմանագրային հարաբերությունների ձախողման մեջ բացակայում է:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 19.12.2014թ. ժամը 17:15-ին և 25.12.2014թ. ժամը 10:00-ին կազմակերպված քննարկումներին, հայտնել է, որ «Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ի մեղքը Պայմանագիրը լուծելու հարցում բացակայում է և պայմանագրային պարտավորությունները ժամանակին չկատարելը պայմանավոր-ված է եղել կազմված նախագծային-նախահաշվային փաստաթղթերում առկա թերություններով:

Կենտրոնի այն հարցին, թե օրացուցային գրաֆիկով նախատեսված որ աշխատանքներն են Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջությամբ կատարվել, «Իջևան ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ ավարտվել է միայն «Կոմունալ կառուցվածքներ» աշխատանքի տեսակը, իսկ մյուս աշխատանքները մնացել են անավարտ:

<u>3. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.10.2014թ. N 04/032-1603 գրությամբ դիմել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ին՝ խնդրելով կարծիք տալ Ընկերությանը Ցուցակում ներառելու հարցի վերաբերյալ:

Պատվիրատուն 04.12.2014թ. N ՏԾԻԳ-850 գրությամբ հայտնել է, որ Հ-37, Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար-Այգեպար ճանապարհի Վազաշեն-Պառա-վաքար հատվածի շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքների իրակա-նացման ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/1ՃՀ պետական գնման պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Պայմանագրի N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, նախատեսված են յոթ առանձին տեսակի աշխատանքներ: Այսինքն՝ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն փաստացի խախտել է օրացուցային գրաֆիկով նախատեսված բոլոր տեսակի աշխատանքների կատարման ժամկետները՝ պայմանագրային պարտավորությունները խախտելով ավելի քան մեկ անգամ:

Պատվիրատուն միաժամանակ հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունների խախտման հիմքով «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի նկատմամբ ԾԻԳ-ի կողմից հաշվարկվել է 41,563,702 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տույժ, տուգանք և պատճառված վնասներ, ինչի վերաբերյալ 29.10.2014թ. ՏԾԻԳ-702 գրությամբ հայտնել է Ընկերությանը՝ խնդրելով նշված գումարը փոխանցել ՀՀ պետական բյուջե, սակայն վերջինիս կողմից այդ գումարը չի փոխանցվել: Արդյունքում, Պատվիրատուն նշված գումարը գանձելու նպատակով դատարան է ներկայացրել գումարի բռնագանձման պահանջի մասին հայցադիմում:

Պատվիրատուն 17.12.2014թ. ՏԾԻԳ-896 գրությամբ Կենտրոնին հայտնել է նաև, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Պայմանագրի N 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, նախատեսված են թվով յոթ առանձին տեսակի աշխատանքներ:

Պատվիրատուն հայտնել է, որ ըստ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի ներկայացրած կատարողական ակտերի՝ վերոնշյալ օրացուցային գրաֆիկով նախատեսված յոթ առանձին տեսակի աշխատանքներից Պայմանագրով սահմանված ժամկետում Ընկերությունն ավարտել է միայն «Կոմունալ կառուցվածքներ» աշխատանքի տեսակը, իսկ մնացած վեց տեսակի աշխատանքները մնացել են անավարտ: Այսինքն՝ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն փաստացի խախտել է օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների կատարման ժամկետները՝ պայմանագրային պարտավորությունները խախտելով ավելի քան մեկ անգամ:

Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ Պայմանագրի՝

- 3.4.6 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավոր է Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել

Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը,

- 6.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05%-ի չափով,
- 6.3 կետի համաձայն՝ Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով Պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5%-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հաշվարկել է տուգանք, որը կազմում է 2,598,800 ՀՀ դրամ և տույժ, որը կազմում է 7,159,014 ՀՀ դրամ (չկատարված աշխատանքների արժեք՝ 318,178,407 դրամ x 0.05 % x 45 օր):

Միաժամանակ, հաշվարկված տույժի (տուգանքի) գումարից հաշվանցվել է չափագրումների համաձայն՝ Ընկերության կողմից կատարված Պայմանագրով նախատեսված մետաղական խողովակների (առանց գլխադիրների) կառուցման աշխատանքների արժեքը 6,357,642 ՀՀ դրամի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝

- 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի լուծմամբ պատճառված վնասները,
- 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Հիմք ընդունելով վերոնշյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված, սակայն չկատարված աշխատանքների ավարտման համար Պատվիրատուն կնքել է նոր պայմանագիր սկզբնական պայմանագրից 38,168,530 ՀՀ դրամ ավելի գումարով, հետևաբար՝ նշված գումարը հաշվարկվել է որպես Պատվիրատուին պատճառված վնաս:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ պայմանագրային պարտավորությունների խախտման հիմքով «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի նկատմամբ Պատվիրատուի կողմից հաշվարկվել է 41,563,702 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տույժ, տուգանք և պատճառված վնասներ, ինչի վերաբերյալ 29.10.2014թ. գրությամբ տեղեկացրել է «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ խնդրելով նշված գումարը փոխանցել ՀՀ պետական բյուջե, սակայն վերջինիս կողմից մինչև օրս այդ գումարը չի փոխանցվել:

«Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 19.12.2014թ. ժամը 17:15-ին և 25.12.2014թ. ժամը 10:00-ին կազմակերպված քննարկումներին, պնդեցին 04.12.2014թ. ՏԾԻԳ-850 և 17.12.2014թ. ՏԾԻԳ-896 գրություններով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՍՑ-ԳԲԽ-09/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2014թ. N 73-1/673427-14 գրությամբ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի և «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի միջև 27.02.2014թ. կնքվել է «ՏԾԻԳ-ԲԸԱՀԱՇՁԲ-2014/1 ՃՀ» ծածկագրով Հ-37, Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար հատվածի շրջանցիկ ճանապարհի կառուցման աշխատանքների կատարման պայմանագիր:

2. Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով, սահմանվել են կապալառուի կողմից կատարվելիք յոթ առանձին տեսակի աշխատանքներ՝ լաբորատոր փորձարկումներ, հողային աշխատանքներ, ճանապարհային ծածկ, ջրահեռացում, գաբիոններ, անվտանգության էլեմենտներ և կոմունալ կառուցվածքներ:

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված յոթ առանձին տեսակի աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 30.06.2014թ.:

4. Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված յոթ առանձին տեսակի աշխատանքներից սահմանված ժամկետում Ընկերության կողմից ավարտվել է միայն

«Կոմունալ կառուցվածքներ» աշխատանքի տեսակը, իսկ մնացած վեց տեսակի աշխատանքները Պայմանագրով սահմանված ժամկետում չեն կատարվել և մնացել են անավարտ:

5. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Տրանսպորտի ԾԻԳ» ՊՀ-ի 14.08.2014թ. ՏԾԻԳ-517 գրությամբ Պայմանագիրը միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետները խախտելու հիմքով:

6. Ընկերությունը Պատվիրատուի 14.08.2014թ. ՏԾԻԳ-517 գրությունն առձեռն ստացել է 14.08.2014թ.:

7. Պայմանագրային պարտավորությունների խախտման հետևանքով Պատվիրատուի կողմից «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ի նկատմամբ հաշվարկվել է 41,563,702 ՀՀ դրամ ընդհանուր գումարով տույժ, տուգանք և պատճառված վնասներ, ինչի վերաբերյալ Պատվիրատուն 29.10.2014թ. գրությամբ տեղեկացրել է «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին, սակայն Ընկերության կողմից մինչև օրս այդ գումարները Պատվիրատուին չեն վճարվել:

<u>4. ՍՑ-ԳԲԽ-09/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների

գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 149-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երեք տարի ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը չի վերականգնվել մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը:

Պայմանագրի 1.3 կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Այսպիսով, «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունը՝ Պայմանագրի թիվ 2 հավելվածով՝ օրացուցային գրաֆիկով սահմանված ժամկետում չի ավարտել Պայմանագրով նախատեսված թվով 6 տեսակի կատարման ենթակա աշխատանքները:

Նկատի ունենալով, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունն ավելի քան մեկ անգամ խախտվել է և վերոնշյալ խախտումները հանգեցրել են Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որի

հետևանքով հաշվարկված վնասը, տույժը և տուժանքը մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելն Ընկերության կողմից չի վերականգնվել, ուստի գտնում ենք, որ առկա են հիմքեր «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 06.10.2014թ. N 73-1/673427-14 գրությամբ «Իջևանի ՃՇՇ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված երեք տարի ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-09 /14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան